

**ՏՈՒՐ ԿՈՊԱԼ, ԿԱՅ ԿՈՊԱԼ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի),
Լոռու բարբառ (խոսվածք)**

Ըլել ա, չի ըլել՝ մի Ֆորսկան: Էդ Ֆորսկանը ամեն հետ ֆորս գնալիս ա ըլել ու ֆորս անելիս ա ըլել չոլերումը, ականատ ա սարքելիս ըլել: Օրերի մի օրը ականատի մեջը մի դուռ ա ընկել, գնացել ա Ֆորսկանը դուռը բռնել ա ականատի միջիցը:

Ղուշը լիզոլ ա ըլել, խոսացել ա Ֆորսկանի հետ, ասել ա.— Ինձ վեր թող, քեզ կհարստացնեմ: Ֆորսկանը զարմացել ա դուռի խոսալուցը թե.— Շատ տարի ա ֆորսկան եմ, էս թավուր զարմածքը չեմ տեհել:

Ֆորսկանն ասում ա դշին.— Ինձ ո՞նց պտես հարստացրնիլ:

Ղուշն ասում ա.— Իմ աջու թնի տակիցը իրեք բմբուլ պոկե, եփ որ սովես՝ բմբուլների մինը վեր թող՝ քի հմա հավիտենական կերակուր կըլի:

Ֆորսկանը պոկում ա դշի աջու թնի տակից իրեք բմբուլ ու դշին վեր թողում: Ֆորսկանը գնում ա բմբուլը վեր թողում, քամին տանում ա բմբուլը, ինքը գնում ա բմբուլի ետնա մի ավերու չոլ: Գնում ա, տենում ա, որ ընդեղ մի ամարաթ կա, նի ա մտնում ամարաթի մեջը, տենում ա մի Ուշապի պառավ կա, մի փուրթ արձիճ բերանը գձած մաստակի տեղ ծամում ա:

Ասում ա Ֆորսկանը.— Բա՛րի աջողում քի, նանի՛:

Ասում ա Ուշապի պառավը.— Աստծու բարին քի, որդի, թե որնանի չէիր ասել, մաստակս պնդվել էր, քի հետը մոմ պըտեի գձիլ, որ մաստակս կակղել էր միքիչ:

Ասում ա.— Որդի՛, արի քեզ պըհեմ, իրեք որդի ունեմ, հըրես կգան քի կփչացնեն:

Պահում ա, գալիս են տղերքը:

Ասում են մորը.— Իսանի ֆոտ ա գալի ըստիան. ի՞նչ ես կերել, մերա ջան, յարաք մեզ հմա էլ պիե՞լ ես:

Ասում ա մերը.— Ես մի կոնտ պառավ եմ, իմ կշտին ի՞նչ կա, որ ուտեմ, յա ձեզ հմա պիեմ:

Տղերանցը փլավ ա տալի, անսաս են անում տղերքը:

Ետնա պառավն ասում ա.— Տղե՛րք, խի՞ չեք ասում, թե՛ դու քարից ես ըլել, թե՛ փետից:

Տղերքն ասում են.— Ի՞նչ ասենք, դո՛ւ ասա:

Պառավն ասում ա.— Ախպեր ունեմ, ախպոր տղա ունեմ, ձեզանե վախում են, որ ըստի գան:

Ասում են տղերքը.— Մեր քեռենին, յա մեր քեռու տղերքը ո՛ր գան՝ աչքերուս վրա կուզենք, մի րան էլ ա փեշքաշ կանենք:

Ասում ա պառավը.— Էկել ա ձեր քեռու տղեն, ձեզանե ես վախեցի, պիեմ եմ:

Ասին.— Բե՛ տենանք, ճնանչենք, որ նրա էլ քողուլիս չտանք:

Բերուց պառավը Ֆորսկանին, ասավ.— Իմ ախպոր տղեն ա:

Ուշապին շատ սիրեցին դրան, ոնց որ իրանց աչքի լիսը ըլի:

— Ե՞փ ես ուզում,— ասին,— գնալը:

Ասավ.— Ռավոտը:

Հըմիկուց եղը համարձակ արի, գնա:

Ռավոտը ճամփա գցեցին նրան. մի դըստախուն տվին նրան. դըստախունը վի կա լավ, գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց, սովեց. գնաց նստեց մի ախպրի կշտի:

— Ի՞նչ անեմ,— ասավ,— էս դատարկ դաստախունը:

Տնագի վեր դաստախունը աղաքին փռեց.— Ա՛ դըստախուն,— ասավ,— հաց ու պանիր բեր ուտեմ:

Նա տնագ աներ, դրստախունիցը շիտակ դուս եկավ հաց ու պանիր: Ֆորսկանը զարմացավ, ու նորից թքավորն ինչ կերակուր ուտում ա, ընդուց ուզեց: Դուս եկավ՝ կերավ, խմբչկնի ուզեց, դուս եկավ՝ խմեց: Կերավ կշտացավ, ուրախ-ուրախ վի կալավ դրստախունը ու գնաց իրա տունը: Տարավ տանը փռեց, իրան տանեցոց վրեն նստացրուց, ինչ որ ուզեց՝ դուրս եկավ դրստախունիցը: Տանեցիք կերան, կշտացան:

Էքսի ռավոդը Ֆորսկանն ասավ կնկանը.— Թքավորին պետք ա մենձըրեմ ես:

Կնիկը ղնամիշ արավ.— Ա՛յ մարդ, հո գժվել չե՞ս:

Մարդն ասավ.— Իմ ասածն ասած ա, կանչիլ պտիմ:

Անկաճ չկալավ կնկանը, կանչեց թքավորին ու նագրին, դրստախունը փռեց աղաքներուն ու ասավ դրստախունին. «Ինչ որ թքավորի լայեղ բան կա՝ դուս արի»: Դուս է կավ: Կերան, խմեցին, կշտացան:

Թքավորն իր գնալու վախտը ասավ իրան նոքարին.— Մեր հացթուխի դրստախունը թորոնն ա ընկել, էդ դրստախումը վի կալ տար մեր ամարաթը: Տարավ:

Կնիկն ասավ.— Պրծա՛ր, հըմի կուտե՛ս ոտներս:

Մարդը խոսաց ոչ: Գնաց մի բմբուլ թողուց, բմբուլը գնաց էն ծերքի ամարաթը, նի մտավ:

Ծերքվանի պես ասավ.— Բարի հաջողում, նանի՛:

Ասավ Ուշապի պառավը.— Բարո՛վ էկար, տղե՛ս:

Մնաց ընտեղ մինչի ռիգու: Էկան ուշապնին, բարով տվին ու շատ ուրխացան: Ասին.— Մեր քեռու ճամփեն բաց ենք արել:— Ե՞՞փ ես ուզում գնաս,—ասին:

Թե.— Ձեր տեսութին էկել ի, բան շատ ունեմ, ռավոտը պիտի գնամ:

Ռավոտը գնալու վախտը մի որձ էշ տվին: Էշը աղաք արավ ու քշեց դրբա իրա տունը:

Ճամբումը սովեց, էլ էն դրստախունի պես հենց գիտեր հաց պտի դուս գար, ասավ. «Հաց ըլեր, պանիր ըլեր»: Մի գաղ էլ ա էլավ ոչ: Ասավ. «Էս էշը ինձ հմա ոսկի պտի փթրի՛լ»: Ասիլն ու հատախ էշը փթրեց ոսկի. մարդը տեհավ, որ ոսկի փթրեց, ոսկենին հվաքեց, տարավ տուն: Իրան տանն էլ փթրացրեց ոսկի, ասավ.— Թքավորին կանչիլ պտեմ:

Կնիկն ասավ.— Կանչե՛, էշն էլ իրան տուր, պրծի:

Ասավ.— Էդ քու բանը չի, գլուխս տանիլ մի:

Կանչեց մարդը, կնկանը անկաճ չկալավ:

Էկավ թքավորը, էշը բերուց աղաքին կագնացրուց՝ ոսկի փթրեց:

Թքավորը ասավ նոքարին.— Մեր դաթրների մինը գելը կերել ա, էդ էշը տար ընտուր տեղը դաթրին խառնի:

Էն էլ տարան:

Ասավ կնիկը մարդին.— Հըմի պրծա՛ր, ա՛ջքդ դուս գա:

Մարդը բան չխոսաց, մի բմբուլ էր մնացել, բմբուլը վի կալավ, դուս եկավ: Գնաց չուր, վեր թողուց բմբուլը, էտնեն գնաց. էլ գնաց էն ամարաթը: Գնաց նի մտավ. «Բարի աջողում» տվուց: Ասավ.— Բարի աջողո՛ւմ քի, նանի՛:

Ասավ Ուշապի պառավը.— Բարո՛վ էկար:

Տղեն նստեց, Ուշապի պառավը հաց բերուց, տղին հաց ուտացրուց, կշտացրուց: Բիգունն էկան Ուշապի տղեքը, տեհան էն մարդին, ո՛ր շատ զահլա տարավ, մի վուր-կոպալ տվին, ճամփու դրին:

Ֆորսկանը վուր-կոպալը առավ գնաց: Վուր-կոպալը¹ մի կխտարի գուդի մեչն էր: Գնաց էլ էն ախպրի կուշտը, սովել էր, հաց ուզեց, հենց գիտաց գուգումը հաց կա. շատ բաների անումը սովուց՝ պարապ անց կացավ:

Մի դափիլ ասավ.— Վուր կոպալ, տո՛ւր կոպալ:

Կոպալը գուդվիցը դուս էկավ ու իրան կարկաժին վեր ա հատում:

Ֆորսկանը շշկվեց, գիտեր ոչ ինչ ասի, մի դափիլ ասավ.— Գուր կոպալ²:

Ֆորսկանը մտածեց. «Սրանով պետք ա գտնեմ ծերքի կորածնին՝ դըստախունն ու էշը»:

Գնաց իրանց տունը, կնկանն ասավ.— Ա՛յ կնիկ, մի բան եմ բերել:

Ասավ.— Ի՞նչ ես բերել:

Ասավ.— Մի կոպալ եմ բերել:

Ասավ.— Կոպա՛լ, դուս արի:

Դուս էկավ, երեխանց, կնկա գլխին վեր ա հատում:

Ասավ կնիկը.— Ա՛յ մարդ, մեզ կոտորեց, է՛:

Ասավ.— Կա՛ց կոպալ:

Կոպալը տեղը մտավ:

Ասավ.— Թրավորին մենձրիլ պտիմ:

Կնիկն ասավ.— Մենձրե՛, իսկ վախտն ա:

Մենձրեց թքավորին ու նագըրին: Էկան նստեցին:

— Կոպալ,— ասավ,— տո՛ւր, վախտն ա:

Կոպալն էկավ ու սկսեց թքավորի ու նագիրի կարկաժին տալը:

Թքավորը Ֆորսկանին ասավ.— Թափի՛ էս անիրավիցը:

Ասավ.— Դա ձեզանե՛ գատ ա ուզում: Հընչկել բերեք ոչ, կարալ չեմ թափիլ:

Թքավորն ասավ.— Ի՞նչ ա ուզում:

Ասավ.— Դըստախունն ու էշը, մին էլ՝ քու ախչիկը իմ տղի հըմա:

Թքավորը ճարահատած մարդ ա դրկում դըսաախունն ու էշը բերում են: Ախչիկը բերում չի:

Կոպալը տալուց կշտանում չի, ասում ա.— Հընչկել ախչիկդ բերես ոչ՝ կոպալը եդ չի դառնալ:

Իլլաճը կտրում ա թքավորի, ախչիկն էլ բերիլ ա տալի:

Էլ ա վեր հատում:

Թե.— Հըմի՞ ինչ ա ուզում:

Թե.— Հմի էլ ասում ա՝ համ հըրսանիք արա, համ քու թախտը քու փեսին տու՝ քու մահից եդնը:

— Ռագի եմ,— ասում ա թքավորը,— էս անիրավիցը ինձ թափե:

Ասում ա Ֆորսկանը կոպալին.— Կա՛ց կոպալ:

Կոպալը գնում ա գուդեն մտնում:

Թքավորը օխտն օր, օխտը քշեր հըրսանիք ա անում, ախչիկը փսակում Ֆորսկանի տղի հետ ու իրան եդնեն էլ թախտը Ֆորսկանի տղին տալիս:

Չարըն ընդի, բարին ըստի:

1 Տուր կոպալ — Մ. Կ.:

2 Կաց կոպալ — Մ. Կ.: